ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ

Հայ մշակույթը ևս մի կորուստ ունեցավ: 78 տարեկան հասակում կյանքից հեռացավ նշանավոր թարգմանիչ-լրագրող և պատմաբան Հարություն Գևորգի Թուրշյանը:

Հ. Թուրշյանը ծնվել է Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում 1900 թ., արհեստավորի ընտանիքում: Սկզբնական կրթություն ստանալով հայրենի քաղաքում, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ընտանիքի հետ գաղթել է Անդրկովկաս: Դեռևս Ներսիսյան դպրոցում ուսանելու տարիներին նա կատարում է առաջին գրական-լրագրական քայլերը: 1918 թվականին հայ ժողովրդի համար ճակատագրական օրերին նա Երևանում էր և իր մասնակցությունը բերեց Սարդարապատի նշանավոր ճակատամարտին: Հետագայում նա Բաքվում մանկավարժությամբ և գրականությամբ է զբաղվում:

Երեսնական թվականներին Հ. Թուրշյանը տեղափոխվում է Երևան, ծավալում թարգմանչական-լրագրական արդյունավոր գործունեություն:

Նա աշխատել է «Խորհրդային Հայաստանի» խմբագրությունում, Հայաստանի պետական հրատարակչությունում, քաղհրատում: Ակնառու է նրա ներդրած ավանդը մարքսիզմի-լենինիզմի կլասիկների երկերի, ինչպես նաև ռուսական վիպական-հրապարակախոսական գրականության հայերեն թարգմանության ասպարեզում: Հիշատակության է արժանի այդ ուղղությամբ նրա կատարած աշխատանքներից հատկապես Գերցենի «Եղելություններ և խոհեր» մեծարժեք երկի թարգմանությունը:

Հարություն Թուրշյանը բազմակողմանի հետաքրքրությունների տեր անձնավորություն էր: Թարգմանական բեղմնավոր գործունեությանը զուգահեռ նա լրջորեն զբաղվել է նաև հայ ժողովրդի պատմության հարցերով: 1947 թ. նա հաջողությամբ պաշտպանել է հայ-հաբեշական հարաբերությունների վերաբերյալ թեկնածուական դիսերտացիան: Նա զբաղվել է նաև արևմտահայ ազգային-ազատագրական շարժման հարցերով: Սակայն Թուրշյանի առավել արժեքավոր աշխատությունը՝ 1918 թ. հայկական գոյատևումների՝ Սարդարապատի հերոսամարտին նվիրված մենագրությունն է,

ուր հեղինակը առաջին անգամ սովետահայ պատմագրության մեջ ցույց տվեց Սարդարապատի պաշտպանության համաժողովրդական բնույթը և գրա-պատմա-քաղաքական կարևորագույն նշանակությունը:

Հարություն Թուրշյանը բազմակողմանիորեն զարգացած, անկեղծ և սրտամոտ անձնավորություն էր, փորձառու թարգմանիչ ու պատմաբան, որի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ՄԻ ԽՈՒՄԲ ԸՆԿԵՐՆԵՐ

[1978]